

ԱՐԵՎՄՏԱԿԱՅԵՐԵՆԻ ՊԱՏՃԱՌԱԿԱՆ ԲԱՅԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Լ. Ն. ԳԱԼՍՅԱՆ

Աշխարհաբարին և մասնավորապես արևմտահայերենին նվիրված աշխատություններում՝ արևմտահայերենի բայակազմությունը անհրաժեշտ ուշադրության է արժանացել և հիմնական գծերով ներկայացվել, սակայն պատճառականի կազմությունը ամբողջությամբ վերցրած առանձին քննության նյութ չի դարձել:

Մեր նպատակն է բառարանների և գրական աղբյուրների ընձեռած նյութի հիման վրա հանգամանորեն ներկայացնել արևմտահայերենի պատճառականի կազմությունը: Քանի որ արևմտահայերենի պատճառականակերտ ցն մասնիկը՝ գրաբարյան ուցան ածանցական մասնիկի հնչյունափոխված ձևն է, և ըստ արտաքին տպավորության թվում է, թե աշխարհաբարի պատճառականը գրաբարյանի անմիջական շարունակությունն է՝ սոսկ ուցան> ցն հնչյունափոխությամբ, ուստի համոզիչ, հիմնավոր եզրահանգումներ անելու նպատակով համեմատել ենք գրաբարի և արևմտահայերենի նույնարմատ պատճառականները:

Ըստ մեր հաշվումների՝ գրաբարի պատճառական բայերը (նկատի ունենք -ուցան ածանցով կազմվածները) ՆՀԲ-ում 927-ն են: Չենք քննարկելու այն դեպքերը, որոնք արևմտահայերենում անմիջական արտահայտություն չեն գտել թե՛ բառային, թե՛ քերականական ձևավորման առումով (580 բայ):

Գրաբարում -ացուցանեմ վերջացող 145 բայ արևմտահայերենում ներկայանում է -ացնել վերջավորությամբ:

Դրանց սկզբնատիպերը թե՛ գրաբարում, թե՛ արևմտահայերենում վերջավորվում են միակերպ՝ անալ, և բնականաբար օրինաչափ է, որ նրանց պատճառականներն էլ վերջավորվում են համապատասխանաբար ացուցանել և ացնել :

Գրաբարում որոշ դեպքերում միևնույն բայի 2 կամ 3 պատճառականի ձևեր գոյություն ունեն, սակայն արևմտահայերենում դրանց դիմաց կա ընդամենը մեկը: Այսպես՝ գրաբարն ունի անդորրացուցանեմ և անդորրեցուցանեմ, անյախացուցանեմ և անյախեցուցանեմ, զազանացուցանեմ և զազանեցուցանեմ, յառաջացուցանեմ և յառաջեցուցանեմ, իսկ արևմտահայերենը՝ անդորրացնել, բայց ոչ անդորրեցնել, անյախացնել, բայց ոչ անյախեցնել, զազանացնել, ոչ զազանեցնել, յառաջացնել, ոչ յառաջեցնել:

¹ Տե՛ս Ա. Այտընյան, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Եր., 1987, Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, Բ. 4, գիրք Բ, Եր., 1961, Վ. Աճեմյան, Գրական արևմտահայերենի ձևավորումն ու զարգացումը, Եր., 1971, Յ. Գազանճեան, Նոր քերականութիւն արդի հայերէն լեզուի, Միջին դարընթացք, Կ. Պոլիս, 1910, Ս. Աբրահամեան, Բ. Վերդեան, Վ. Քոսեան, Հայերեն լեզուի դասագիրք, Եր., 1966, Զ. Մելքոնեան, Գործնական քերականութիւն արդի հայերէն լեզուի, Միջին և բարձրագույն դարընթացք, Պէրոթ, 1981, Կ. Առաքելեան, Արդի հայերենի քերականութիւն, Պէրոթ, 1998:

² Պատճառականակերտ մասնիկն այս ձևն է ստացել միջին հայերենում, որտեղից էլ անցել է գրական հայերեններին: Այս մասին տե՛ս Հ. Աճառյան, ԳՂՎ. աշխ., Եր., 1961, էջեր 280, 305, 306, Ս. Ղազարյան, Հայոց գրական լեզվի պատմություն, Բ. Ա, Եր., 1961, էջ 305, նույնի՝ Միջին հայերեն, գիրք Ա, Եր., 1960, էջ 191, նույնի՝ Հայոց լեզվի պատմության համառոտ ակնարկ, Եր., 1981, էջ 221, Ա. Այտընյան, ԳՂՎ. աշխ., էջ 93, «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», Բ. Ա, Եր., 1972, էջեր 30, 76:

³ Մրանցից 1 բայ՝ լուացուցանեմ, 2 անգամ է հիշատակվում առաջին հատորում և երկրորդ հատորի «Մնացորդք» բաժնում: Հր. Աճառյանը սրանց ավելացնում է Երուսաղեմի համաբարբառից գտած 2 բայ՝ ջերմացուցանել և չուտեցուցանել (Հ. Աճառյան, ԳՂՎ. աշխ., էջ 277):

Այրա պատճառն այն է, որ արևմտահայերենն ունի անդորրաճալ, անշայտաճալ, գազա-
ճալ, յառաջաճալ, որոնցից և օրինաչափորեն առաջացել են համապատասխան պատ-
ճառականները, սակայն չունի գրաբարյան անդորրիմ, անշայտիմ, գազանեմ//իմ, յառա-
ջիմ պարզ ձևերը, որոնցից պիտի ծագեին -եցնել պատճառականները:

Կա նաև հակառակ երևույթը, երբեմն գրաբարյան մեկ պատճառականի դիմաց
արևմտահայերենն ունի երկուսը.

խլացուցանեմ - խլացնել, խուլցնել
կուրացուցանեմ - կուրացնել, կուրցնել
ողջացուցանեմ - ողջացնել, ողջ-ցնել:

Այրա պատճառն էլ այն է, որ արևմտահայերենն ունի ոչ միայն խլաճալ, կուրաճալ,
ողջաճալ, ինչպես գրաբարը, այլև բայարմատի ձայնավորի վերականգնումով կամ էլ
միջնավանկի ձայնավորների սղումով դրանցից առաջացած խուլճալ, կուրճալ, ողջճալ
ձևերը, որոնցից ածանցվել են համապատասխան պատճառականները:

Այս բոլորը ցույց են տալիս, որ արևմտահայերենի -ացն ածանցով քննարկված
պատճառականները ոչ թե գրաբարի -ացուցան մասնիկով համապատասխան բայերի
փոխանցումներն են՝ սուկ -ացուցան > -ացն հնչյունափոխությամբ, այլ կազմվել են
արևմտահայերենի -աճալ վերջացող սկզբնաձևերից: Իսկ դրանց արտաքին նմանություն-
ը պայմանավորված է նրանով, որ պատճառականը երկուսում էլ կազմվում է նույն
սկզբունքով՝ անց. կտր. հիմք + ածանց + ել: Համեմատենք՝

Արմտհ. ազնուաճալ, անց. կտր. հիմք՝ ազնուաց-, պտճո՞ ազնուացնել (<ազ-
նուաց+ցն+ել)

Գրբ. ազնուաճալ, անց. կտր. հիմք՝ ազնուաց-, պտճո՞ ազնուացուցանել (=ազ-
նուաց+ուցան+ել):

Պետք է նկատել, որ պատճառականը հիմնայերենյան ձևից չի կազմվում նաև
արևմտահայերենի հիմքը հանդիսացող Պոլսի բարբառում. այստեղ այն կազմվում է բար-
բառային սկզբնաձևից.

կակղիլ > գագողնալ, գագոխծա կակղացուցանել > գագոխծունել՝:

Նշենք նաև, որ գործածության հաճախականության տեսակետից գերակշռում են
երբեմն նորակազմ, երբեմն էլ գրաբարյան ձևերը: Խլացնել//խուլցնել, կուրացնել//կուրց-
նել, ողջացնել//ողջցնել գուրաձևերից գրական արևմտահայերենը նախապատվությու-
նը տալիս է խլացնել, կուրցնել, ողջցնել ձևերին. խուլցնել-ը ժողովրդախոսակցական է,
իսկ կուրացնել-ը, ողջացնել-ը հազվադեպ են կիրառվում: Նույնը պետք է ասել նաև
նրանց սկզբնատիպերի մասին:

Գրաբարի անորոշում -ացուցանեմ վերջավորվող 29 բայ արևմտահայերենում ու-
նի -ցնել վերջավորությունը: Այս խմբի բայերի սկզբնատիպերը գրաբարում վերջանում
են -աճալ, իսկ արևմտահայերենում՝ -ճալ, ինչպես՝ արթնճալ, գիրճալ (գերճալ), դեղին-
ճալ, թեթևճալ, թուլճալ, լալճալ, լաւճալ, լուսճալ, խուլճալ, խոնաւճալ, կակուղճալ,
կարմ(ի)րճալ, հասկճալ, հիւճալ, մեծճալ, մթնճալ, մոռճալ, մեղճալ, շատճալ, չորճալ,
սևճալ, վերճալ, տգեղճալ, երկնճալ: Ուստի դրանց համապատասխան պատճառական-
ները գրաբարում օրինաչափորեն վերջավորվում են -ացուցանել, իսկ արևմտահայերե-
նում՝ -ցնել:

Այս խմբի բայերից դեղ/ինցնել-ը (կա նաև դեղ/նցնել՝ ծագած դեղ/նիլ ձևից), խողջ-
նել-ը, հիւնցնել-ը, կակ/ողջնել-ը, ի տարբերություն գրաբարի, արևմտահայերենում առկա
են բայահիմքի լիաձայնությամբ՝ առանց շեշտափոխական հնչյունափոխության. այսպես,
ունենք դեղ/ինճալ, խողճալ, հիւճալ, կակ/ողճալ, որպիսի ձևերը հին հայերենում չկային:
Նորակազմ(ճալ վերջավորվող) սկզբնատիպերի կողքին գրաբարյան ձևերի (դիրաճալ,
երկայնճալ, թեթևճալ, թուլճալ, լաւճալ, խլաճալ, կակղաճալ, կարմրաճալ, հնա-
ճալ, մեծաճալ, մեղաճալ, վերաճալ) պահպանված լինելու դեպքում առկա են նաև նրան-
ցից կազմված պատճառականները (դիրացնել, երկայնացնել, թեթևացնել, թուլացնել,
լաւացնել, խլացնել, կակղացնել, կարմրացնել, հնացնել, մեծացնել, մեղացնել, վերաց-
նել):

՝ Տե՛ս Հր. Աճառյան, Քննություն պոլսահայ բարբառի, Եր., 1940, էջ 140 - 141:

Վերոհիշյալ -ացնել//եցնել ձևերը (բացառությամբ 2 զույգի՝ վերացնել - վերցնել, նեղացնել - նեղցնել⁵) հավասարաթեք են:

Դրանց տարբերությունը սուկ առավել կամ պակաս կիրառական լինելն է: Նկատում ենք նաև, որ գրաբարի հետևացուցանեմ//հետևեցուցանեմ և քրտնացուցանեմ//քրտնեցուցանեմ բայերին արևմտահայերենում համապատասխանում են հետևցնել և քրտն(ե)ցնել ձևերը: Սրանց գրաբարյան սկզբնատիպերից արևմտահայերենը պահել է -իլ ձևերը՝ հետևիլ և քրտնիլ, որոնց պատճառականներն ըստ կանոնի պիտի լինեին հետևեցնել, քրտնեցնել: Առաջինի փոխարեն ունենք հետևցնել, իսկ երկրորդին զուգահեռ՝ նաև քրտնցնել: Վերջին երկուսը ի լծորդության պարզ բայերի պատճառականների կազմության կանոնից շեղվող ձևեր են, հետևաբար՝ բացառություններ: Օրինակ՝ «Եղածը ինչ է որ... կը բաւ որ քեզի տաք ապուր մը խմցնեմ, կը բաւէ որ քեզ լաւ մը քրտնցնեմ ու լմնցաւ գնաց»⁶: «Այս բոլոր դէպքերէն հետևցուցիցինք, որ ով ինչ ընէ, իրեն կ'ընէ»⁷: Այսպիսի օրինակները միաժամանակ հաստատում են, որ պատճառականը արևմտահայերենում կազմվում է նաև ինքնուրույն՝ անկախ գրաբարից:

Հին հայերենի -ացուցանեմ վերջացող 2 պատճառականի արևմտահայերենում համապատասխանում են -եցնել ձևեր:

Սառն-ացուցան-եմ> սառ-եցն-ել

վստահ-ացուցան-եմ> վստահ-եցն-ել:

Բանն այն է, որ գրաբարյան սառնանամ//սառիմ//սառնում//սառչիմ և վստահանամ//վստահեմ//վստահիմ ձևերից արևմտահայերենում գործում են -իլ վերջացող ձևերը, որոնցից և օրինաչափորեն կազմվել են համապատասխան պատճառականները:

Գրաբարի անորոշում -եցուցանեմ վերջացող 94 բայի արևմտահայերենում համապատասխանում են -եցնել վերջավորվող ձևեր:

Մօտեցնել ձևին զուգահեռ և ավելի հաճախ արևմտահայերենում գործածվում է մօտիկցնել ձևը, որ նորակազմություն է մօտիկնալ սկզբնաձևից, որը չկար գրաբարում:

Գրաբարում այս բայերից մի քանիսը, ել//եցուցանել ձևերին զուգահեռ, ունեին -ացուցանել ձևը, որի համապատասխանը (-ացնել) արևմտահայերենում չկա: Պատճառն այն է, որ արևմտահայերենը չի ժառանգել այդ բայերի գրաբարյան սկզբնատիպերը՝ դիանալ, ընտանանալ, խամրանալ, հուսասարանալ բայերը: Այդպես նաև կսկծացուցանեմ//կսկծեցուցանեմ բայազույգի դիմաց արևմտահայերենում կա կսկծեցնել, որի պարզ ձևը (պիտի լիներ կսկծիլ), սակայն, ըստ բառարանների վկայության, պակասում է:

Այսպիսի երևույթներ կային նաև գրաբարում: Այսպես՝ կսկծացուցանել ձևի մայրը, որ պիտի լիներ կսկծանալ, գոյություն չունի: Գուցե հենց այդ պատճառով արևմտահայերենում չկա կսկծացնել (< կսկծացուցանել, գրբ.) պատճառական ձև: Սա նշանակում է, որ լեզուն մի կողմից ձգտել է կանոնավորել անկանոնը, սակայն մյուս կողմից երևան է բերել մի այլ անկանոնություն՝ կսկծալ - կսկծեցնել անհամապատասխանությամբ:

Իջնել բայի պատճառականը, սպասելի իջցնել ձևի փոխարեն, իջեցնել է: Այն կարելի էր համարել գրաբարյան իջեցուցանել պատճառականի փոխանցում՝ -եցուցան > -եցն օրինաչափ հնչյունափոխությամբ, սակայն պետք է հաշվի առնել, որ քննարկվող բայաձևը Պոլսի բարբառում ունի ինչչցունել ձևը, որն արևմտահայերենում կարող էր դառնալ իջեցնել: Ի դեպ, Վ. Աճեմյանը, անդրադառնալով գրական արևմտահայերենի՝ 1840 - 70 թթ. նորմավորման ընթացքին, մասնավորապես գրում է. «Պատճառական սեռային առման բայերի համար դեռևս վերջնականապես կայունացած չէ -ցնել (-ացնել, -եցնել) վերջավորությունը, որ գրվում է ը-ով (ջընել), երբեմն նաև առանց ը-ի, շատ գործածական են նաև բարբառային -ցունել (-ացունել, -եցունել) վերջացող ձևերը, համեմատել՝ իջեցունել...»:

⁵ Բանն այն է, որ հին հայերենի նեղանալ և վերանալ բայերի իմաստներն արևմտահայերենում բաժանվել են համապատասխանաբար նեղանալ և նեղնալ, վերանալ և վերնալ զույգերից յուրաքանչյուրի միջև: Քանի որ հիշյալ զույգերի անդամները նույնանիշ չեն, ուստի նույնանիշ չեն նաև նրանց պատճառականները:

⁶ Տե՛ս Շահան Շահնուր, Թարալեզներուն դասանությունը (այսուհետև՝ ՇՇԹ), Պէլրութ, 1960, էջ 112:

⁷ Տե՛ս «Ջարթօնք», Պէլրութ, 3 հունվարի, 1991:

⁸ Տե՛ս Վ. Աճեմյան, նշվ. աշխ., էջ 267-268:

Պետք է ասել նաև, որ ինչէջուները պատճառակաճն ածանցվել է իշնալ սկզբնատիպից՝ որին համապատասխան գրական ձև՝ իշնալ, իսկապես կար քսաներորդ դարասկզբի արևմտահայերենում: «Վերջապես ճաշի ժամը կհնչի և ամենքը կիջնան սեղանատուն»¹⁰: Ուշագրավ է, որ նույն հեղինակը 2 ձևն էլ (իշնալ և թջնել) գործածում է. «Արդեն ի՛նչ անտեղություն էր ամեն մանրամասնությանց իշնել»¹¹: «Թող որ երկնի հորդ այլքներն հրեղեն ձոն կապուտակ իրենց ժպտով հաշտ իշնան»: «Թող իմ ճակատս իշնա՛, իշնա՛ դարավոր Այն տածանքին մեջ՝ ուր ցավի ողբն երբեք Չը դադրեցավ. իսկ բազուկներս հըզոր՝ Թող մագլցին նրպատակի ժայռ սեզ»¹²:

Այսպիսով, մեր կարծիքով, իջեցնել ձևը համաբանության արդյունք է: Իջնել բայի պատճառականի այսպիսի՝ իջեցնել, կազմությունը ն կերպածանցավոր բայերի միակ բացատրությունն է (հմմտ.՝ մտնել-մտցնել, մոռնալ-մոռցնել):

Մյուս բայերի -եցնել պատճառականը բացատրվում է դրանց - իլ վերջացող սկզբնատիպերով:

Գրաբարում -եցուցանեմ վերջացող 12 բայ արևմտահայերենում ունի -ցնել վերջավորությունը:

Դրանցից աշխատ-ցնել, ցաւ-ցնել, խոտոր-ցնել, յարմար-ցնել, նման-ցնել, վազ-ցնել կանոնիկ կազմություններ չեն. ածանցված լինելով սկզբնատիպ -իլ կամ -ել վերջացող ձևերից՝ նրանց պատճառականը ըստ կանոնի պետք է կազմվեր -եցնել վերջավորությամբ:

Վազցնել բայաձևի կապակցությամբ անհրաժեշտ է ասել, որ վերջին շրջանում, գուցե արևելահայերենի ազդեցությամբ, այն գործածվում է նաև կանոնավոր ձևով՝ վազեցնել: Օր.՝ «Արտասահմանեան շուկաներու վրայ հայ նկարիչներու մաքսանեւոց գործերու վաճառքը, տասը հազարաւոր տոյարներ վաստկելու հետանկարը բերնին ջուրը սկսած է վազեցնել շատերու, որոնք վերջին ամիսներուն կողոպուտներ կը կազմակերպեն առաւել յայտնի գեղանկարիչներուն գործերուն վրայ» (Ջ, 3.1.1991):

Ամչ-ցնել, դպ-ցնել, երեւ-ցնել, խոշոր-ցնել, վախ-ցնել պատճառականների այսպիսի ձևը պայմանավորված է նրանով, որ արևմտահայերենում դրանք ածանցվում են -նալ վերջացող սկզբնատիպերից (ամչ-նալ, դպ-նալ, երեւ- նալ, խոշոր-նալ, վախ-նալ), ի տարբերություն գրաբարի, ուր ածանցվում էին -իլ ձևերից: Հետևաբար այս կազմությունները կանոնիկ են:

Երդուրնցնել պատճառականը կանոնավորապես ածանցվել է երդուրննալ ձևից, որը չկար գրաբարում, սակայն կա Պոլսի բարբառում. երդուլ-էրթվրննալ, -վրնցա երդումնեցուցանել-երթվրնցունել¹³:

Գրաբարյան երդմնեցուցանեմ պատճառականի հետքերը երևում են XX դարասկզբի արևմտահայ գրականության մեջ՝ երդմն-ցնել/եցնել: Օր.՝ «Ո՛վ քու ստվերդ պտըտցուց իմ հոգվույս անարձագանք դամբաններուն մեջ անհույս Ու երդմնեցուց որ դեռ սիրեմ ես քեզի»¹⁴: «Մարդը երդմնեցուց զիս, որ մարդու բան չհայտնեն»¹⁵: Այսպիսի օրինակները ցույց են տալիս, որ արևմտահայերենի պատճառականը կարող էր լինել գրաբարյան պատճառականի սոսկ հնչյունափոխված տարբերակը: Սակայն այժմ այսպիսի պատճառականները գործածական չեն, բառարանները ևս դրանք չեն արձանագրում: Ներկայումս երդուրնցնել ձևը ևս կիրառական չէ, նրա փոխարեն գործածվում է երդում ընել տալ հարադրությունը:

Հին հայերենի -եցուցանել վերջավորվող 3 պատճառական բայ արևմտահայերենում առկա են -ացնել վերջավորությամբ.

¹⁰ Տե՛ս Հր. Աճառյան, Քննություն... էջ 141:

¹¹ Տե՛ս «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան» (այսուհետև՝ ԺՀԲ), Բ. 2, Եր., 1972, էջ 249:

¹² Տե՛ս Գ. Ազնաւորյան, Անհայտ էջեր Դանիել Վարուժանի ժառանգությունից, «Բանբեր Երևանի համալսարանի» (այսուհետև՝ ԲԵՀ), 1969, № 3, էջ 152:

¹³ Նույնը, էջ 160:

¹⁴ Տե՛ս Հր. Աճառյան, Քննություն... էջ 141:

¹⁵ Տե՛ս Թորբեն Սևակ, Երկեր, Եր., 1970, էջ 125:

¹⁶ Տե՛ս ԺՀԲ, Բ. 1, էջ 572:

թնդ - եցուցան - են> թնդ - ացն - ել
 յստակ- եցուցան - են> յստակ - ացն - ել
 բարեկամ - եցուցան - են>բարեկամ - ացն - ել:

Բարեկամեցուցանել-ը, թնդեցուցանել-ը ածանցվել են -իլ, իսկ յստակեցուցանել-ը՝ -ել վերջավորվող պարզ ձևերից, այնինչ արևմտահայերենի համապատասխան պատճառակազմներն ածանցվել են -ալ կամ -անալ (բարեկամանալ, թնդալ, յստականալ) վերջավորվող ձևերից: Թե՛ գրաբարում, թե՛ արևմտահայերենում հիշյալ պատճառակազմները կանոնավոր են, իսկ նրանց տարբեր կազմությունները պայմանավորված են տարբեր կազմության սկզբնատիպերով:

Պետք է նկատել, որ Ե խոնարհման ներգործական բայերի մի մասը գրաբարում պատճառական իմաստ է արտահայտում, ուստի նրանցից կազմված պատճառական ձևերն իրենց բուն անցողական բայերի այսպես կոչված կրկնակի՝ զուգակից ձևերն են, որոնք երբեմն գործածվում են իմաստի թեթև նրբերանգներով: Ուցան ածանցն այսպիսի դեպքերում ավելի է ուժեղացնում բայի ներգործական նշանակությունը և նրան տալիս է պատճառականության որոշ երանգ: Իմաստաբանական մեծ տարբերություններ չունեցող այսպիսի զուգակիցները բնականաբար լեզվում կողք կողքի հարատևել չէին կարող. պահպանվել է նրանցից մեկը, գերազանցապես պարզ ձևը, թեև կան նաև բացառություններ, երբ երկու ձևն էլ գործածվում է: Այսպիսի 21 զույգից պահպանվել են պատճառական ածանցով ձևերը: Գրաբարի բառարաններն արձանագրում են ևս 64 զույգ, որոնցից լեզվում, ի տարբերություն նախորդների, հաղթել են պարզ ներգործականները:

Հր. Աճառյանը, նկատելով, որ Պոլսի բարբառում ամեն բայ չի կարող ստանալ -ցնել մասնիկը, և -իլ վերջացող չեզոք բայերից հաճախ կազմվում է ներգործական՝ -իլ > -ել փոփոխությամբ (փոխանակ -իլ > -ցնել-ի), կատարում է նաև հետևյալ դիտողությունը. «Այս հիմամբ է, որ գրական լեզվի մեջ ունենք դե՛ռ ծառայել-ծառայիլ, շարժել-շարժիլ ևն»¹⁶: Իսկապես, այդ կարող ենք ասել ազատել, այրել, բախել, զլորել, զգեստաւորել, բնկըղմել, թաւալել, խափանել, մոլել, մորմոքել, յածել, պառակտել, տապալել, փարատել բայերի մասին. սակայն չենք կարող ասել մնացած 50 բայերի մասին, քանի որ արևմտահայ գրական լեզվում դրանք չունեն -իլ վերջավորվող չեզոք սկզբնատիպեր: Դրանցից շատերի չեզոքները ձևավորված են -ուիլ մասնիկով (օր.՝ կազդորուիլ, կուտակուիլ, գալարուիլ¹⁷, վարակուիլ ևն), մի բան, որ նշանակում է, թե իրենք են ներգործականից առաջ եկել և ոչ թե հակառակը: Ուստի, հավանական կարելի է համարել, որ վերոհիշյալ ներգործականները գրաբարյան համապատասխան ձևերի մեխանիկական փոխանցումներն են:

Այսպիսով, -իլ վերջացող չեզոքներից ներգործական ստանալու հատկությունը՝ -իլ վերջավորությունը -ել դարձնելով (փոխանակ - ցնել-ի), արևմտահայերենում մասնակի երևույթ է և վերաբերում է որոշակի թվով բայերի: Դրանք են՝

ազատիլ-ազատել	խախտիլ- խախտել ¹⁸	կտրիլ- կտրել
այրիլ-այրել	խաշիլ- խաշել	մարիլ- մարել
ասղնտիլ-ասղնտել	ծակիլ- ծակել	շիջիլ- շիջել
արիւնիլ-արիւնել	ծակծկիլ- ծակծկել	պատտիլ- պատտել
զլորիլ-զլորել	ծոիլ- ծոել	վառիլ- վառել
եփիլ-եփել	կտորիլ - կտորել	փարատել-փարատիլ:
թափիլ- թափել	կտորտիլ - կտորտել	
թրջիլ- թրջել	կործանիլ - կործանել	

Ուսումնասիրությունից պարզվում է, որ միշտ չէ, որ արևմտահայերենն ունի Պոլսի բարբառի ձևերին համապատասխան ձևեր, և հակառակը՝ արևմտահայերենի՝ վերը թվարկված ոչ բոլոր բայազույգերի համապատասխանները գոյություն ունեն Պոլսի բարբառում:

¹⁶ Տե՛ս Հր. Աճառյան, Քննություն... էջ 142-143:

¹⁷ ԺՀԲ (Ռ. 1, էջ 361) սխալմամբ արձանագրում է գալարիլ (*արևմտի*):

¹⁸ Խախտիլ ձևն արևմտահայ արդի բառարանները չեն արձանագրում, սակայն մենք գտանք օրինակներ. «Միշդն ըսելով, այդ սերտակցությունը խախտեցաւ» («Ազդակ», 29.1.1964), «Բայց հիմա միատեղ ճակատը խախտեցաւ և Եվրոպա երկուքի խախտած է» («Ազդակ», 28.1.1934):

ել // եցնել գուգահեռությամբ հիմնայերեցյաճ մի քանի բայեր էլ գրական արևմտահայերենում գոյություն չունեն պարզ կամ բաղադրյալ ներգործական ձևով.

գիճուորեմ//գիճուորեցուցանեմ
վարանեմ// վարանեցուցանեմ:

Հին հայերենում -ուցանեմ վերջացող 19 բայ արևմտահայերենում օրինաչափորեն ներկայանում է -ցնել ձևով՝ իբրև արդյունք ուցան > ցն հնչյունափոխության:

Արևմտահայերենում դրանք ածանցվել են անց-նիլ, դառ-նալ, արթն-նալ, գբօս-նել, թաք-չիլ, լենալ, կափ-չիլ, հագ-նիլ, հաս-նիլ, հեծ-նել, մեռ-նիլ, մտ-նել, վերադառ-նալ, ցած-նալ, փախ-չիլ, փակ-չիլ, փլ-չիլ, փրթիլ ձևերից, որոնք, բացառությամբ փրթիլ բայի, ն կամ չ ածանցավոր բայեր են: Քանի որ արևմտահայերենում ի և Ե լծ. կերպածանցավոր բայերի կատարյալի հիմքն արմատական է (անց-, գբօս-, թաք-, թո-, կափ-, հագ-, հաս-, հեծ-, մեռ-, մտ-, փախ-, փակ-, փլ-), Ա խոնարհման կերպածանցավոր բայերինը՝ ցոյական (դարձ-, արթնց-, լեց-, վերադարձ-, ցածց-), իսկ փրթիլ բայը ի լծորդության պարզ բայերի մեջ բացառություն կազմող հինգ բայերից մեկն է, որի կատարյալն արմատական է (փրթ-այ), ուստի հիշյալ բայերի կանոնավոր պատճառականները պետք է ունենան (և գրական լեզվում իսկապես ունեն) ցնել վերջավորվող ձևեր:

Արթնցնել, ցածցնել ձևերում հանդիպում են կատարյալի հիմքի և ածանցի երկու ց, անցընել ձևում՝ արմատի և ածանցի երկու ց, դարձնել, վերադարձնել-ի դեպքում՝ ձ և ց բաղաձայնները, և դրանցից երկրորդը դուրս է ընկնում:

Անցնել բայի փոխարեն գրվում է անցընել: Հր. Աճառյանը նշում է, որ այդ արվում է անցողականը՝ անցընել (գրք. անցուցանել), չեզոքից՝ անցնել (գրք. անցանել), զանազանելու համար¹⁹: Սակայն ներկայումս այդ երկու բայերի շփոթության վտանգ չկա ոչ միայն անցողականի ը ձայնավորի շնորհիվ (անցընել), այլև (և ամենից առաջ) այն պատճառով, որ չեզոքն -իլ լծորդության է պատկանում՝ անցնիլ: Օր.՝ «Վ'անցնի իր աշխատասենեակը և աչք է կ'անցնե գործի թուղթերը»²⁰:

Փրթցնել ձևի մեջ թ-ն ընկնում է բաղաձայնների կուտակումից առաջացած արտասանական դժվարությունը հաղթահարելու նպատակով:

Ներգործական սեռի հագնիլ բայից բացի, արևմտահայերենում կա չեզոք սեռի հագուիլ «քրտիլ, յարդարուիլ»²¹ բայը, որից ստացվել է հագուեցնել պատճառականը:

Լցնել ձևն առաջացել է լենալ չեզոք բայից, որը չկար գրաբարում, և որն արևմտահայ բառարաններից ոչ մեկը չի արձանագրում: Ջարմանալիորեն այս ձևով այն հիշատակված չէ նաև արևմտահայերենի քերականություններից որևէ մեկում: Ուստի լեցնել պատճառականի ծագումն անբացատրելի է թվում:

Ոչ միայն XX դարասկզբի, այլև դարի 2-րդ կեսի մամուլում և գրականության մեջ գտանք լենալ բայի գործածության շատ դեպքեր, որոնցով արդեն պարզաբանվում է լեցնել ձևի ծագումը²²: Օրինակներ՝ «...եւ ես կը լւեի, որ հեքեաթ է Հայկը, սիրտս ատելութեամբ ու վայրագութեամբ կը լենար այծի մօրութով փոքրահասակ մարդուն դէմ, որ կը համարձակէր ուրանալ հայոց աշխարհին ու մեր սեպ լեռներուն ահաւոր հսկան»²³: «Ու կը յիշեմ ընկերոջ մը պարզ ու տխուր քանի մը տողերը ու սիրտս յուզումով կը լենայ...» (նույնը, էջ 240): «Ատտուան զով ու բարի շունչը կը լենար ներս»²⁴: «Գիշերը բաց պատուհաններէն ներս կը լենար ծովուն հովը» (նույնը, էջ 250): «...և մարդ չի խորհիր, որ իւրաքանչիւր Ամանոր քայլ մը ւաւելի կը մօտեցնէ զինքը Անխուսափելիին ու չ'անդրադառնար, որ ժամանակը իր փխրուն ու մահապարտ գոյութեան դէմը կեցած դաժան դահիճն է, իսկ Կեանքը, որուն վրայ այնքան կը գուրգուրայ, ունայնութեան փոսն է, որ լենալ չի գիտեր» (Ազդակ, 1.1.1958): «Առաջին անգամ զգացի անոնց համակրութեան ու երջանկութեան իմաստը և սիրտս երջանկութեամբ լեցաւ» (ՎՇՄԱ, էջ 238):

¹⁹ Տե՛ս Հ. Աճառյան, Լիակատար քերականություն..., էջ 307:

²⁰ Տե՛ս «Ազդակ», Պէյրութ, 15.1.1932: Այսուհետև՝ Ազդ:

²¹ Տե՛ս Բառարան զանձարան հայերէն լեզուի, էջ 260: Այսուհետև՝ Բ42:

²² Այսպես է նաև Պուսի բարբառում. լնուլ > լենալ, լեցա, լցուցանել > լեցուցնել (ԲՊԲ, էջ 141):

²³ Տե՛ս Վազգեն Շուշանեան, Մահուան առագաստը (այսուհետև՝ ՎՇՄԱ), Պէյրութ, 1952, էջ 185:

²⁴ Տե՛ս Վազգեն Շուշանեան, Սիրոյ և արկածի տղաքը, Պէյրութ, 1953, էջ 126:

Խիստ ուշագրավ է այն հանգամանքը, որ նույն ստեղծագործության մեջ հանդիպում են թե՛ լեճալ չեզոք բայը և թե՛ նրա անցողական տարբերակից (լեցնել) կազմված լեցուի կրավորակերպ չեզոքը: Այսպես, Վ. Շուշանյանի «Մահուան առագաստը» ստեղծագործության մեջ, որից արդեն բերեցինք լեճալ բայի մի քանի օրինակ, հանդիպում են նույնանիշ լեցուի բայի գործածության դեպքեր: «Ես վայրենի ատելութեամբ կը լեցուի դպրոցի տնօրենին դէմ, որ սպառնացած էր վարքի թելը իջեցնել այն տղան, որ չի բարեւեր իր մայրը կամ իր հայրը» (ՎՕՄԱ, էջ 207): «Ինձմէ խնդրեց, որ իր դուրը, որ աղբիւրին ծորակին առջեւ էր և որ լեցուած էր արդեն, վերցնէ ու ծորակը փակէմ (նույնը, էջ 229):

Սա նշանակում է, որ ինչ - որ շրջանում լեճալ և նրանից ծագած լեցուի (լեճալ - լեցնել - լեցուի) նույնանիշ ձևերը զուգահեռաբար գոյություն են ունեցել, մինչև վերջինս հաղթել է:

Կարծում ենք, լեճալ ձևը դուրս է մղվել այսպես. նրա անցողական ձևի՝ լեցնել բայի մեջ աստիճանաբար մարել է պատճառականության իմաստը (օր.՝ «Քիչ մը ձայն, քիչ մը ծիծաղ և քիչ մը շարժում կու գային լեցնել անոր հսկայ պարապյութիւնը»²⁵), ուստի և վերջինս դադարել է ածանցյալ գիտակցվելուց, սկսել է ըմբռնվել իբրև սկզբնատիպ ներգործական բայ, որի հետևանքով նրանից ածանցվել է համապատասխան չեզոքը՝ լեցուի: XX դարի 2-րդ կեսից նախ՝ գերիշխող, ապա մեծաշխան է դառնում լեցուի չեզոք ձևը: Ուշագրավ է նաև, որ եթե XX դարասկզբին ներգործականն էր կազմվում չեզոքից (լեճալ-լեցնել), ապա արդի արևմտահայերենում, ընդհակառակը, չեզոքն է կազմվում ներգործականից (լեցնել-լեցուի): Ու թեև լեցնել բայի մեջ պատճառականության իմաստը մարել է, և այն այլևս չի գիտակցվում իբրև ածանցյալ ձև, սակայն շարունակում է խոնարհվել պատճառականի պես՝ լեցուցի, լեցուցիր, լեցուց...:

Հին հայերենում - ուցանէս վերջացող 5 պատճառական բայ արևմտահայերենում ունեն - եցնել վերջավորությունը.

- խրտ - ուցան - եմ> խրտ - եցն - ել, խրտչ - եցն - ել
- նստ - ուցան - եմ> նստ - եցն - ել
- շիջ - ուցան - եմ> շիջ - եցն - ել
- ուռ - ուցան - եմ> ուռ - եցն - ել
- սառ - ուցան - եմ> սառ - եցն - ել:

Խրտչեցնել, նստեցնել, շիջեցնել, ուռեցնել, սառեցնել պատճառականները ստացվել են խրտչիլ, նստիլ, շիջիլ, ուռիլ, սառիլ պարզ բայերից, որոնց անցյալ կատարյալի հիմքը, բացառությամբ նստիլ-ի, ցոյական է՝ խրտչեց-, շիջեց-, ուռեց-, սառեց-: Սրանցից -ցնել ածանցով ըստ կանոնի կազմվել են համապատասխան պատճառականները, իսկ նստեցնել ձևը շեղվում է կանոնից: Անկանոնությունն այն է, որ -ցնել մասնիկից առաջ ավելացել է ե՝ բաղաձայնների կուտակման հետևանքով առաջացած արտասանական դժվարությունը մեղմելու նպատակով (նստիլ-նստայ, նստեցնել, փխ.՝ նստցնել):

Օրինակներ՝ «Այնպիսի ձևով մը զիս կը հալածէիք, որ զիս խրտչեցուցիք» (Բ, 1962, թ. 7, էջ 13): «Գորովանքով զիս նստեցուց իր ծունկերուն վրայ»²⁶: «Ձեռքը ինչ որ ինկաւ, նետեց դէպի պատուհանը, երակները ուռեցուց, փրփուր ժայթքեցուց և աւելի մը երկար կոթով վործեց աղջկան գլուխը հարուծել» (ՕՇՅԻ, էջ 137):

Հանգուցանել բայի դիմաց արևմտահայերենն ունի 2 բայ՝ հանգցնել և հանգչեցնել:

Հանգուցանել - և ածանցվել է հանգչիլ բայից, որի իմաստներն արևմտահայերենում բաժանվել են հանգիլ «մեռնիլ», ապա փոխաբերաբար նաև «մարիլ» և հանգչիլ «հանգըստանալ» բայերի միջև: Ի տարբերություն գրաբարի՝ արևմտահայերենում հանգչիլ-ը պարզ կազմության բայ է, ուստի չ-ն անցյալ կատարյալի հիմքում պահպանվում է՝ հանգչեց: Պատճառականի -ցնել վերջավորությունն ավելացնելով՝ ունենում ենք հանգչեցնել կանոնավոր ձևը՝ «հանգստացնել» նշանակությամբ: Իսկ հանգցնել բայն արտահայտում է «մարել, հանգցնել» (կրակը, լույսը) իմաստները²⁷՝ հանդիսանալով կարծես հանգիլ չեզոք բայի պատճառականը (վերջինս ըստ կանոնի պետք է լիներ հանգեցնել < հանգեց(այ)+ցնել):

²⁵ Տե՛ս «Բագին» (այսուհետև՝ Բ), Պէրրուք, 1976, թիվ 1, էջ 41:

²⁶ Տե՛ս Ծահան Ծահնուր, Ջուզ մը կարմիր տետրակներ, Պէրրուք, 1975, էջ 14:

²⁷ Տե՛ս Հայոց լեզուի նոր բառարան (այսուհետև՝ ՆՀԲ), Բ. 1, էջ 1152:

Կորսնցնել ձևի այսպիսի կազմության որևէ բացատրություն հայերենագիտության մեջ չի տրված:

Հ. Աճառյանը գրում է. «Ծատ անկանոն են արևմտյան կորսնցնել (ալիք՝ կորցնել) և լեցնել (ալիք՝ լցնել) անցողականները»²⁸:

Մյուսները կամ չեն անդրադառնում այս բային, կամ սրանից ավելին չեն ասում²⁹:

Մեր կարծիքով, կորսնցնել-ը ծագել է հետևյալ ճանապարհով: Կորուսանել-ի պատճառական իմաստը մթազնել է. այն գիտակցվել է իբրև պարզ ներգործական բայ, որից և -ցն ածանցով կազմվել է կորսնցնել-ը: Մեր ենթադրությունը որոշ չափով հիմնավորվում է միջինհայերենյան կորսնել ներգործական և կորսնցնել³⁰ պատճառական բայերի առկայությամբ: Կորսնել-ը գրաբարյան կորուսանել-ի սղված ձևն է: Միջին հայերենի կորսնվիլ³¹ չեզոքը անշուշտ առաջացել է այդ նույն կորսնել ներգործականից: Վ. Աճեմյանը, քննելով XIX դարի երկրորդ կեսի գրական արևմտահայերենի նորմավորման ընթացքը, պատճառականի չկայունացած վերջավորության կապակցությամբ վկայակոչում է նաև կորսնցուցնել³² բայաձևը, որը մասամբ հաստատում է մեր ենթադրությունը: Սակայն հետազայում կորսնվիլ չեզոք բայի ց-ն ընկել է բաղաձայնների կուտակման հետևանքով առաջացած արտասանական անհարմարությունը հաղթահարելու նպատակով: Այստեղից էլ՝ արևմտահայերենի կորսուիլ չեզոք բայը:

Այսպիսով, կորսնցնել և լեցնել անկանոն կազմությունները պատճառաբանվում են լեզվի զարգացման պատմական ընթացքով: Որ կորսուիլ ձևը եկել է միջին հայերենից, իհարկե միջնորդավորվելով բարբառներով, երևում է նաև նրանից, որ արևելահայերենը նույնպես ունի կորսվել ձև. «...կորսված տերիտորիաները այլևս չվերադարձվեցին»³³:

Գրաբարի մի խումբ պատճառական բայեր արևմտահայերենում առկա են -ուցան ածանցի պահպանումով և ձուլումով՝ իբրև պարզ բայ: Այսպիսին են՝ ծանուցանել, ծնուցանել, կացուցանել (միայն զերծ կացուցանել կապակցության մեջ), հատուցանել, մածուցանել, մատուցանել, յարուցանել, յափուցանել, ուսուցանել, ջեռուցանել, սնուցանել:

Հարկ է նշել նաև, որ թեև այս բայերն արձանագրված են արդի արևմտահայերենի բառարաններում, սակայն անհաստատ են, և ներկայումս դրանց փոխարեն շատ հաճախ գործածվում են ծանուցել, ծնունդ տալ, հատուցել, մատուցել, յարուցել, ուսուցել, ջեռուցել, սնուցել, սնունդ տալ կամ էլ բոլորովին առանձին բառեր:

Այսպես նաև՝ զեկուցանել, ընդելուզանել, ընկլուզանել, կառուցանել, որոնք թեև XX դարասկզբին գործածվում էին, սակայն այժմ փոխարինված են զեկուցել, ընդելուզել, ընկլուզել, կառուցել ձևերով:

Այսպիսիները թեև ծագումնաբանորեն պատճառականի կազմություն ունեն, սակայն ո՛չ ձևաբանորեն, ո՛չ իմաստով, ո՛չ էլ իրենց կազմության արդի ձևով չեն կարող պատճառականների մեջ դասվել:

Արդի արևմտահայերենում կան մի խումբ պատճառական բայեր, որոնք հին հայերենում չունեին համապատասխան նշանակությամբ ձևեր՝ լինի պարզ թե բաղադրյալ կազմությամբ: Այսպիսին են՝ ժպտեցնել, իրականացնել, լմնցնել, խշխշացնել, խոհեմացնել, խպնեցնել, հանուցնել, հմտեցնել, հոտեցնել, հպատակեցնել, ճնկճնկացնել, ճոմոացնել, մազնիսացնել, յոզնեցնել, մզզացնել, մղկտացնել:

Գրաբարի պարզ ներգործական մի քանի բայեր արևմտահայերենում արտահայտվում են պատճառական ձևերով.

ցնդեմ - ցնդեցնել
նեխեմ - նեխեցնել
ժայթքեմ - ժայթքեցնել

²⁸ Տե՛ս Հ. Աճառյան, Լիակատար..., հ. 4, գ. Բ, էջ 308:

²⁹ Տե՛ս Յ. Գազանճեան, Նոր քերականություն արդի հայերեն լեզուի, Կ. Պոլիս, 1924, էջ 207:

³⁰ Տե՛ս Միջին հայերենի բառարան, հ. 1, էջ 408:

³¹ Տե՛ս նույն տեղը:

³² Տե՛ս Վ. Աճեմյան, նշվ. աշխ., էջ 268:

³³ Տե՛ս Բ. Հարությունյան, Մեծ Հայքի Գուգարք աշխարհը ըստ «Աշխարհացոյց»-ի, ԲԵՂ. 1977, թիվ 2, էջ 186:

**համաձայնեմ - համաձայնեցնել
մանրեմ - մանրացնել:**

Երկու բայ պարզ ձևերին զուգահեռ ձեռք են բերել պատճառականներ.

**կարճեմ - կարճել // կարճեցնել
կրճտեմ - կրճտել // կրճտացնել:**

Ամփոփենք: Թեև արևմտահայերենի պատճառականակերտ -ցն մասնիկը գրաբարյան -ուցան ածանցական մասնիկի համառոտված ձևն է, սակայն արևմտահայերենի պատճառականը գրաբարյանի անմիջական շարունակությունը չէ. պատճառական հին ձևերի դիմաց գրական արևմտահայերենում հաճախ գործածական չեն նրանց՝ սուկ ուցան>ցն հնչյունափոխված ձևերը. ոչ միշտ է, որ գրաբարի -ացուցանել վերջավորվող բայերին արևմտահայերենում համապատասխանում են -ացնել, -եցուցանել վերջավորվողներին՝ -եցնել, -ուցանել վերջավորվողների՝ -ցնել վերջավորվող ձևեր. երբեմն էլ գրաբարյան նույնարմատ մեկից ավելի պատճառականների դիմաց արևմտահայերենը ունի ընդամենը մեկը և հակառակը՝ մեկի դիմաց՝ մի քանիսը: Պատճառն այն է, որ նույնարմատ պատճառականների սկզբնատիպերը գրաբարում և արևմտահայերենում ձևով միշտ նույնը չեն. դրանք հաճախ տարբերվում են լծորդությամբ և (կամ) կազմությամբ, իսկ վերջիններս էլ վճռորոշ դեր են խաղում ցնել, եցնել, ացնել վերջավորություններից որևէ մեկի ընտրության հարցում: Սկզբնատիպերի լծորդության կամ կազմության տարբերությունները պայմանավորված են տարբեր հանգամանքներով՝ գրաբարյան բազմաձևություններից որևէ մեկի հաստատում, առավել տարածվածություն կամ անհետացում արևմտահայերենում, միջնավանկի ձայնավորի սղում և (կամ) բայարմատի ձայնավորի վերականգնում (և դրանց արդյունքում՝ նորակազմ բայեր): Հաճախ էլ գրաբարյան պատճառականի դիմաց արևմտահայերենը ունի սուկ պարզ ներգործական բայ:

Այս փաստերը մեզ բերել են այն համոզման, որ, որպես ընդհանուր սկզբունք, մի խումբ բայեր իրոք ուցան>ցն փոփոխությամբ են ձևավորվել արևմտահայերենում, իսկ հետո, երբ ցն-ը սկսել է գիտակցվել իբրև ածանց, նոր բայեր են կազմվել:

Л. Н. ГАЛСТЯН - Образование причинных глаголов западноармянского языка. - В статье рассматривается состав причинных глаголов в западноармянском языке, сравнивается с однокорневыми причинными глаголами габара и западноармянского. Показано также, что причинные глаголы западноармянского не являются непосредственным продолжением форм габара.